11085

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«30» 09 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 229 - 25

Նախաձեռնող՝ «ՍԻՐԵԿԱՆ» ԱԿ
Կոտայքի մարզ, Չարենցավան հ., Հանքվաչության փարածք

Գործունեությունը՝ Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Կենտրոնական» տեղամասի արդյունահանում (օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում)
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 229 - 25

«30» սեպտեմբեր **2025թ.**

Կոտայքի մարզի Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Կենտրոնական» տեղամասի արդյունահանման աշխատանքների (օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՍԻՐԵԿԱՆ» ԱԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Կարենիս բնակավայր

Ներածական մաս. «ՍԻՐԵԿԱՆ» ԱԿ-ն նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում և շարունակել իրականացնել լիթոիդային պեմզայի արդյունահանում ՇԱԹՎ-29/054 ընդերքօգտագործման թույլտվությամբ «ՍԻՐԵԿԱՆ» ԱԿ-ին (այսուհետ՝ Ընկերություն) հատկացված հողատարածքում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ՀՕ-150-Ն (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասում: Տեղամասի կենտրոնական հատվածի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնություն՝ 40°22'53.88", արևելյան երկայնություն՝ 44°37'21.58": ՇԱԹՎ-29/054 ընդերքօգտագործման թույլտվությամբ «ՍԻՐԵԿԱՆ» ԱԿ-ին հատկացված հողատարածքի մակերեսը՝ 1.9750 հա է և Ընկերությունը նախատեսում է շարունակել ընդերքօգտագործումը՝ խորանալով դեպի ընդերք, նույն մակերեսով հողատարածքում: Հայցվող տեղամասը տեղակայված է Կարենիս բնակավայրից մոտ 1 կիլոմետր հարավ-

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

արևելք, տարածքի հարևանությամբ անցնում է Երևան-Սևան երկաթգիծը՝ 88 մետր, Արգել (նախկինում՝ Գյումուշի) ՀԷԿ-ի շենքը՝ 1.4 կմ, ՀԷԿ-ի օրվա կարգավորիչ ջրամբարը և բաց դերիվացիոն ջրանցքը: ՀԷԿ-ի օրվա կարգավորիչ ջրամբարը գտնվում է դիտարկվող տարածքից մոտ 230 մետր հեռավորության վրա, մոտ 22-50 մետր հյուսիս՝ բաց դերիվացիոն ջրանցքը, 54-159 մետր հեռավորության վրա՝ ջրանցքի գլխամասային հանգույցի շրջանցող խողովակաշարը:

Նկարագրական մաս. «ՍԻՐԵԿԱՆ» ԱԿ-ն Կոտայքի մարզի Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Կենտրոնական» տեղամասում այժմ իրականացնում է արդյունահանման աշխատանքները և նախատեսում է երկարաձգել թույլտվության ժամկետը՝ շարունակելով իրականացնել լիթոիդային պեմզայի արդյունահանում: Հայցվող տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են բաց եղանակով օգտակար հանածոյի արդյունահանման համար:

Հայցվող տեղամասի կոորդինատներն են (ARMWGS-84 համակարգով)՝

1. 1.X=4471956 Y=8467980
2. 2.X=4472121 Y=8467980
3. 3.X=4472166 Y=8468080
4. 4.X=4471936 Y=8468080

Բացահանքում օգտակար հանածոյի անջատումը զանգվածից իրականացվելու է էքսկավատորի օգնությամբ՝ առանց հորատապայթեցման: Արդյունահանվող օգտակար հանածոն՝ լիթոիդային պեմզան, պիտանի է ջերմամեկուսիչ և կառուցվածքային-ջերմամեկուսիչ թեթև բետոնների պատրաստման համար: Քանի որ հանքավայրը շահագործվում է Ընկերությանը տրամադրված ընդերքօգտագործման թույլտվության շրջանակներում, ուստի հանքավայրի բացում չի նախատեսվում: Նախատեսվում է շարունակել արդյունահանման աշխատանքները՝ դեպի խորը հորիզոններ:

Հայցվող տեղամասի պաշարները դասել B կարգի՝ ծավալը կազմում է 2533.2 հազ.մ^3: Տեղամասի լիթոիդային պեմզաները (պեռլիտները) իրենցից ներկայացնում են թթվային կազմի ապակենման ապարներ՝ բաց-գորշավուն և սպիտակավուն երանգներով: Դրանց համար բնորոշ են գնդաձև կճեպանման առանձնացումները, ինչը հիշեցնում է մարգարտահատիկ (պեռլ): Օգտակար շերտախումբը ավազային ֆրակցիայի միջին պարունակությունը մոտ 30% է, խճինը՝ 70%: Այն մեխանիկական կառուցվածքով և քիմիական կազմով բավական միատարր է: Օբսիդիանի պարունակությունը հումքում կազմում է առավելագույնը 3%:

Ընկերության կողմից հայցվող 1.9750 հա մակերեսում հաշվարկված է 825660 մ^3 օգտակար հանածոյի պաշարներ, որից 161766 մ^3 ՇԱԹՎ-29/054 ընդերքօգտագործման թույլտվությամբ տրամադրվել է: Մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը ընկերությունը մարել է 64200 մ^3 օգտակար հանածոյի պաշար: Այսպիսով, տեղամասում ընդհանուր օգտակար հանածոյի պաշարների մնացորդը կազմում է 761460 մ^3:

Կորզվող պաշարները կազմում են ընդամենը 681507 մ^3 լիթոիդային պեմզա, բացահանքի տարեկան արտադրողականությունը՝ 38073 մ^3 (մարվող) և 34075 մ^3 (արդյունահանվող) լիթոիդային պեմզա զանգված:

Ընկերության հայցվող տարածքում հաշվարկված էր 85000 մ³ մակաբացման ապար: Շահագործման տարիների ընթացքում Ընկերությունը այդ հատվածում կատարել է արդյունահանում, մակաբացման ապարների մի մասը կուտակված է արտաքին լցակույտում: Մակաբացման ապարների մնացորդը կազմում է 27480 մ³: Հայցվող տարածքում հաշվարկվել է 4520 մ³-ը ծավալով հողաբուսական շերտով, որը հեռացվելու և կուտակվելու է ներքին լցակույտում (մշակված հանքաստիճաններին)՝ հետագայում օրենքով սահմանված կարգով օգտագործվելու է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով: Նախկինում իրականացված արդյունահանման աշխատանքների արդյունքում լցակույտում պահեստավորվել է 7480 մ³ հողային շերտ, հետևաբար գումարային առումով տեղամասի տարածքից կհեռացվի և կկուտակվի ընդհանուր 12000 մ³ հողային զանգված:

Արդյունահանման աշխատանքներն իրականացնելու արդյունքում ձևավորվելու են 11 հանքաստիճաներ:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. աստիճանների բարձրությունը – 5.0 մետր
2. աշխատանքային թեքման անկյունը հորիզոնի նկատմամբ – 700-800,
3. մարված հանքաստիճանի թեքման անկյունը - 550,
4. ընթացքաշերտի լայնությունը (հանույթային բլոկի լայնությունը) – 20-25 մետր,
5. հանույթային տեղամասի (բլոկի) ամենափոքր երկարությունը – 12,0 մետր,
6. աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը - 20 մետր,
7. անվտանգության առափի լայնությունը – 2.5 մետր
8. լեռնային աշխատանքների ուղղությունը հարավ-արևելքից – հարավ-արևմուտք, այնուհետև հյուսիս-արևելքից՝ ըստ հորիզոնների:

Արդյունահանման աշխատանքները կատարվելու է դեպի ներքև՝ շերեփանման եղանակով, 1.6 մ³ շերեփի տարողությամբ HYUNDAI 210 LC-7A մակնիշի էքսկավատորով: Կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին, որից հետո իրականացվելու է օգտակար հանածոյի կույտի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ և տեղափոխում ջարդիչ տեսակավորող կայան (այսուհետ՝ ՋՏԿ):

Արդյունահանված օգտակար հանածոն իրացվելու է տեղում՝ սպառողի ավտոտրանսպորտով: Արդյունահաման ընթացքում իրականացվելու է մշակված տարածքի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Արդյունահանումը նախատեսվում է իրականացնել ևս 20 տարի:

Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի Կենտրոնական տեղամասի տարածքում առաջացող ընդերքօգտագործման թափոնները ներկայացված են մակաբացման շերտի ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով՝ հիմնականում կավավազներով, բեկորների և գլաքարերի պարունակությամբ:

Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի Կենտրոնական տեղամասի ընդերքօգտագործման աշխատանքների ընթացքում մթնոլորտ է արտանետվելու 3.839 տ/տարի փոշի, ինչն ազդելու է մթնոլորտային օդի ընդհանուր աղտոտվածության մակարդակի վրա: Ավտոտրանսպորտի աշխատանքի արդյունքում տարեկան

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

կտրվածքով արտանետվող գազերի քանակը կկազմի համապատասխանաբար 0.0107 տ մուր, 0.067 տ ածխածնի օքսիդ, 0.13 տ ազոտի օքսիդ (երկօքսիդի հաշվարկով) և 0.029տ ածխաջրածիններ: Արտադրական գործընթացների փոփոխություն տեղի չի ունենալու և արտանետվող նյութերի ավելացում չի դիտարկվելու հետագա արդյունահանման ընթացքում: Հանքավայրի տարածքում սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծը ներկայացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն 2021 թվականին:

Որպես հնարավոր ազդեցություն դիտարկվում է նաև արտադրական հրապարակի տարածքի աղտոտումը նավթամթերքներով:

Արդյունահանման աշխատանքների արդյունքում փաստացի խախտված է 0.5 հա տարածքի տափաստանային բուսականությունը: Արդյունահանումը շարունակելու դեպքում բացահանքի և ենթակառուցվածքների տեղադրման արդյունքում գումարային խախտվելու է տարածքի չոր տափաստաններին բնորոշ բազմամյա բույսերի տեսակներով ներկայացված նոսր բուսածածկը: Դաշտային դիտարկման ժամանակ արձանագրված տեսակները պատկանում են չոր տափաստանային լանդշաֆտներին: ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ շահագործվող տարածքում չեն հայտնաբերվել:

Ընդերքօգտագործումը շարունակելու դեպքում դիտվելու է կենդանիների միգրացիա տեղամասի տարածքից, ինչը պայմանավորված է լանդշաֆտային ամբողջականության խախտմամբ և աշխատանքների հետևանքով առաջացող աղմուկով և թրթռումներով: Տեղամասի տարածքում կենդանական աշխարհի դիտարկված տեսակներն ունեն լայն տարածում ՀՀ տարածքում, գրանցված չեն ՀՀ կենդանիների Կարմիր գրքում:

Տեղամասում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան և վտանգված էկոհամակարգերի վրա ազդեցություններ չի դիտարկվելու:

Հայցվող տարածքում մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսներ չկան: Դա բացառում է ազդեցությունը ջրային ռեսուրսների, ջրային էկոհամակարգի վրա:

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդի արտանետվող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ բացահանքի, ճանապարհների, ՋՏ կայանի հարթակի տարածքում՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. արդյունաբերական հրապարակի մշտադիտարկումներ՝ հնարավոր աղտոտումից (մեքենայական յուղեր ու քսայուղեր) խուսափելու նպատակով՝ ամսական մեկ անգամ,
3. հողաբուսական շերտի կազմաբանական մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ,
4. աղմուկի և թրթռումների չափումներ՝ բացահանքում և ՋՏԿ հարթակում, ամսական մեկ անգամ,
5. կենսաբազմազանության ուսումնասիրություն հանքավայրում և հարակից տարածքներում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ, Օրենքով սահմանված կարգով պետական կառավարման, տեղական

02543163
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժիններից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքները ամփոփվել են, որոնց ավելացվել են նաև մասնագետի դիտողություններ ու առաջարկությունները և հաշվետվությունն ուղղարկվել է «Սիրեկան» ԱԿ-ին լրամշակման:

Փորձաքննական գործընթացում ստացվել է կարծիք «Հարավ-Կովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ից, որում նշված է որ, համաձայն հաշվետվության, ջարդիչ կայանը տեղակայված է Նուռնուս-Չարենցավան վազուրդի գլխավոր երկաթուղագծի պաշտպանական գոտում և երկաթուղային տրանսպորտի երթևեկության ու շահագործման անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է ՋՏԿ-ի տեղափոխում և պաշտպանական գոտու ապահովում:

Կադաստրի կոմիտեի և Կոտայքի մարզպետարանի կողմից ներկայցված գրության համաձայն՝ հայցվող հողամասը գործող կադաստրային քարտեզում արտացոլելիս ներառվում է գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի սահմաններում:

Հաշվետվության վերաբերյալ կարծիք է ստացվել նաև Ջրային կոմիտեից և «ՄԷԿ» ՓԲԸ-ից, որում նշվում է հարակից տարածքում առկա Արգել ՀԷԿ-ի օրվա կարգավորիչ ջրամբարի, հիդրոտեխնիկական կառույցների և բաց դերիվացիոն ջրանցքի առկայության, որի անօտարելի սանիտարական գոտիներն են մի կողմից 3 մետր, մյուս կողմից (ճանապարհային հատված)՝ 12 մետր, ինչպես նաև դրանց անվտանգության ապահովման մասին:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել են հանրային լսումներ Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրում: Համայնքի բնակիչներն և վարչական ղեկավարը դրական են արձագանքել՝ նշելով, որ արդյունահանման տարիների ընթացքում ընդերքօգտագործողը բարեխղճորեն կատարել է իր պարտականությունները, հարկ եղած դեպքում օգնել է համայնքին: Համայնքի համար կարևոր է հանքի շահագործումը, քանի որ ժամկետի երկարաձգման և արդյունահանումը շարունակելու դեպքում ստեղծվելու են նոր աշխատատեղեր:

Փորձաքննական պահանջներ

1. Արդյունահանման ժամանակ անհրաժեշտ է հետևել հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ չբավարարելու դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ:
2. Արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային

օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/, ինչպես նաև Կոտայք ՋՕ-ին պատկանող բաց դերիվացիոն ջրանցքի ոռոգման ջիր մշտադիտարկումներ և բոլոր արդյունքների հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմնին:

3. Անհրաժեշտ է կատարել հողամասի նպատակային նշանակության փոփոխություն՝ գյուղատնտեսականից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:
4. Անհրաժեշտ է ապահովել Նուռնուս-Չարենցավան վազուրդի գլխավոր երկաթուղագծի 50 մետր պաշտպանական գոտին՝ տեղափոխելով ջարդիչ-տեսակավորող կայանը՝ համաձայն ՀԿԵ-ի կողմից տրամադրված կարծիքի:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սիրեկան» ԱԿ-ի կողմից փորձաքննության ներկայացված Կարենիսի լիթոիդային պեմզայի հանքավայրի «Կենտրոնական» տեղամասի արդյունահանման աշխատանքների (օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան